

Ան լաւ ճարտասան էր միանգամայն. կը բաղձայի լսել իր ոսկի խօսքերը՝ Ապրիլի առթիւ, ինչպէս անցեալ տարի. բայց նա լուռ է հիմա եւ յաւիտեան պիտի չխօսի մեր Ապրիլներուն վրայ. ալ ոչինչ կը զգայ:

Երկու օր առաջ Մոսկուի տօնն ըլլալով, դողդոջուն ձեռքերը համբուրած էինք. այն ձեռքերը որ հայ պատմութիւնը կը գրէր ու կ'օրհնէր մեզ:

Մանուկի պէս կը խնդար, կը բարկանար չար բանի մը համար, իրեն յատուկ անակաշնները կու տար, որոնք նախատինքներ չէին, այլ բարի սրտի մը սրամիտ պատկերները: Հիմա ոչինչ դարձած՝ չի մտածեր, չի խօսիր, չեմ լսեր իր ոտնաձայնը՝ որով դասարան կը մտնէր. վրոշի մը կեանքն իսկ չունի:

Ո՛հ, երանի թէ հոգիին հետ մարմինն ալ աներեւոյթ յաւիտեականութեան անցնէր, շատ գեղեցիկ բան մը պիտի ըլլար... ապրիլն այսօր ահաւոր էր ըլլար՝ երբ դիմացը անդունդ մը կայ:

Կէսօրին չլըցայ ճաշել, հայելիին մէջ աչքերս մեռած տեսայ: Կարելի էր այս պէս մնալ. ահաւոր, այլանդակ մտածումներ պատերէն հոգիս. հիւանդ չլըլալու համար, սկսայ ակտմայ մեծ քրքիջով մը ծիծաղել... կեանքին վրայ:

Իրիկունը ճաշարանին մէջ վարդապետները անդորր կերպարանք ունէին, կարծես համակերպած ուրախութիւն, ասիկա դիւ չգարմացուց: Գացողին խօսեցին պէտքէն խնդալ, իսկ մեր վրայ պէտքէն չլալ: Դարձեալ մեծ քրքիջով ծաղրեցի այս կեանքը...:

ԿԱՐԱՊԵՏ ՏԵՄԻՐՅԱՆ
Աշակերտ Մուրադ-Ռաֆայելեանի
(Ա. տարի Լիկեոնի)

Վեներտիկ, 28 Դեկտեմբեր, 1956

Յ Ա Ի Ա Կ Յ Ա Կ Ա Ն Ն Ա Մ Ա Կ Ն Ե Ր Է

Հ. Սահակ վրդ. Տէր Մովսէսեանի կորուստով մեծ պարսպ մը կը բացուի Միաբանութեանդ՝ պիտի ըսեմ նաեւ՝ հայ իրականութեան մէջ. զի ո՞վ էր այն հայը որ չնանչնար, գէթ անունով միայն, ՀԱՅՐ ՍԱՀԱԿ: Եւ այդ երկու բառերու մէջ ամէն ոք խտացած կը տեսներ ճշմարիտ Հայո անաղարտ, պարզունակ ու բարի Հայու տիպարը: Իսկ մենք կը տեսնենք նաեւ իր մէջ խորապէս հաւատաւոր կրօնաւորը: ...

Վսեմ. եւ Ամենապ. Գերբերջանիկ Հոգեւոր Տէրը պաշտօն կը յանձնէ ինձի՝ իր ալ ցաւակցութիւնները ներկայացնելու Ձեզի եւ Յար. Միաբանութեանդ, հաւատեալ իր ազօրից:

Աստուած յաւիտեական համգիտ պարգեւէ եւ լուսաւորէ անոր բարի հոգին:

ՊԵՏՐՈՍ ԱՐԲԵՊՍ. ՔԵՏԻՃԵԱՆ

տիպ. Կողմնիոյ Հայոց

Հում

Այս առաջիկայի կորուստը լրիւ Ազգին ալ է: Կայ, սակայն Աստուծով միջոցառութիւնը այն ապրող իրողութեան մէջ, ըստ որում նա մեկնեցաւ այս աշխարհէն շահելի յետոյ « Կեանք », յիշատակ բարի եւ անմոռաց քողով մեզ եւ ատոք հասկերը ուսին մտնելով օքեւանը յաւիտեականութեան՝ պատրաստուած Աստուծոյ սիրելիներուն:

Հանգուցեալը գիտցաւ շահարկել կրկնապէս իրեն յանձնուած ֆանֆարները՝ Ազգին համար ժիր մշակի մը առաքինութեամբ:

Օրհնեալ ըլլայ իր խօսուն յիշատակը սերունդէ սերունդ:

ԳԱՐԵԳԻՆ ԱՐԲԵՊՍ. ԽԱՀԱՍՏՈՒՐԵԱՆ

Պատրիարք Հայոց Թիւրքիոյ

Իսթանպուլ

Ձեր ուրախութեան բաժակին խառնուեցաւ լեզուն: Այո՛, մարդկօրէն կը զգամք մեր սիրելիների բաժանման ցաւը. բնական է սրտի վշտախառն զգացումը. սակայն ինձ կ'երեւի թէ բարեբարն Աստուած կամեցաւ որ այդ գոյգ Յոբելեանի առթիւ՝ Ձեր Միաբանութեան մի պատգամաւոր Սըրբոց եւ Հրեշտակաց երկնային դասու մէջ արձագանգէ Ձեր տօնախմբութեան ձայնն, որպէսզի երկնային ու երկրային հոգեշնչող երգերը գրկախառնուած հրաշքին աւելի առատօրէն աստուածային օրհնութիւնը Միջոցառեան սիրելի Միաբանութեան վրայ, սատարելով նրա բարոյակրթական գործունեութեան ազգօգուտ յառաջնադարին:

ՄԿՐՏԻՉ ԵՊԻՍԿ. ԱՐԳԱՐԵԱՆ

Առաջնորդ Իրանի Կաթ. Հայոց

Ձուգա

Մանր սուգով կը համակուի բովանդակ Միաբանութիւնը՝ ամէնուն սիրելի Հ. Սահակ վրդ.ի անակնկալ մահով:

Տխուր լուրը շուտով տարածուեցաւ, պարսպ մը քողով բոլոր գիւմը ճանցողներուն եւ յարգողներուն մէջ:

Մեկնողներուն տեղ Տէրը լեցնէ նորահասներով, նոյնքան արժարժուած՝ Միաբանութեան եւ Միջոցառարայ գործին գաղափարակաւով:

Հ. ԿԱՐԱՊԵՏ ՎՐԴ. ԱՄԱՏՈՒՆԻ

Առաջնորդ Ֆրանսայի Կաթ. Հայոց

Փարիզ

Ամէն անգամ երբ Վեներտիկ կ'այցելէի, կը հանդիպէի հանգուցեալին, դպրոցին կամ վանքին մէջ. կ'երեւէր աշխոյժ եւ առոյգ:

Երբ կը խօսէր ի իրաւաւ կորուցող, Հայաստանի երիտասարդն էր, կարծես, որ կը խանդավառէր իր շուրջիները:

Իբր Հայ ու իբր կրօնաւոր՝ կատարեց լիովին իր պարսպը հանդէպ Ազգին ու Եկեղեցիին:

ԵՂԻՇԷ Ծ. Վ. ԻԹԻՒՃԵԱՆ

Հոգեւոր Հովիւ Աւստրիոյ Հայոց

Վիեննա

Իտալիոյ Հայ գաղութը զգացուած սրտով եւ յարգամբով կը խոնարհի վաստակաւոր պատմաբանին եւ մեծ հայրենասէրին քարոյ հոգակոյտին առջեւ:

ԲԺ. ԵՐ. ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ

Նախագահ

Իտալիոյ Հայոց Վարչութեան

Միլան

Վեր. Հ. Սահակ վրդ. Տէր Մովսէսեանի կորուստով կը շփի քահ մը. բայց այդ քահէն կեանք առած լոյսը կը շրջի կենդանի եւ վառ՝ սրտերու եւ ժամանակին մէջ:

ԲԺ. ԱՐԱՄԱՅԻՍ ՍՐԱՊԵԱՆ

Ի դէմ Իտալիոյ Հայ Մշակութային

Միութեան Վարչութեան

Միլան

Խորունկ ցաւով իմացամք մեր սիրելի Հ. Սահակին յանկարծակաւ վախճանումը:

Որպէս երկարամեայ պաշտօնակից, ունիմք յիշատակներու ծրարներ, ոգեկոչելու համար իր բարի, հայրենասէր եւ բազմավաստակ Տեսչութիւնը: Բարին Աստուած, որ առանց ցաւի կարգադրեց

անոր վախճանը, կը յուսամք եւ կը հայցենք որ պարգեւէ նաեւ իր հոգւոյն լուսաւորութիւնը:

Հրմն. ԶԱՏԻԿ ԽԱՆԶԱՏԵԱՆ

Նախկին Քաղաքական Տեսուչ

Սերի Սամուէլ Մուրատեան Վարժարանի

Պէրս

Je ne sais ce qu'il faut le plus regretter : la bonté de l'homme, la sainteté du prêtre ou l'intelligence de l'historien et du politique dont la moindre conversation soulignait, avec éclat, sa parfaite connaissance des faits et des hommes.

C'est une perte irréparable pour la science et la littérature arméniennes.

Pour ce qui du spirituel, le Révérend Père Sahag Der Movsessian nous reste uni dans la prière et, peut-être, dans bien des grâces reçues, resterons-nous ses débiteurs.

Paris

Christian Dédéyan

Յանուն Չափահաս Որբերու Միութեան եւ ինձի, կու գամ ցաւակցութիւններս յայտնել Միաբանութեան Հայրերուն, կորուստին համար այն հեղ եւ բարի կղերականին, մեծ ազգասէրին եւ ուսեալ դաստիարակին, ՄԵՐ ՀԱՅՐ ՍԱՀԱԿԻՆ, որուն անակնկալ մահը ցաւով համակեց գիւմը ճանցող բոլոր որբերս, եւ մեր աչքերէն արցունքները ակամայ հոսեցան:

Ի դիմաց Զ. Ո. Միութեան Վարչութեան

Նախագահ

Բ. ԱՃԷՄԵԱՆ

Փարիզ

Հ. Սահակ վրդ. Տէր Մովսէսեանի մահով մեր ժողովուրդը կորսնցուց հաւատաւոր Հայ մը, Միջոցառարեան Միաբանութիւնը՝ բազմավաստակ անդամ մը, եւ ես ու Տիկինս՝ լաւ բարեկամ մը:

Տէր եւ Տիկ. Ա. ԽՈՆԴԱՐԵԱՆԻ

Փարիզ

Խորին ցաւով կարգացինք Հ. Սահակ Տէր Մովսէսեանի կսկծալի մահը. այնքան կայտառ, աշխոյժ ու գուարթ, տակաւին վերջերս կը գրէր թէ պիտի այցելէ Փարիզ եւ Մատենադարան:

Այս կորուստը մեծ վիշտ պատճառեց մեզի. ո՞րքան սիրուած ու յարգուած էր ամէնէն:

Ա. ՍԱՄՍԱՆԵԱՆ

Փարիզ

Միտքարկան ոչ մէկ բառ կը գտնեմ գրելու համար, որովհետեւ ինչպէս Ձեզի, մեզի համար ալ անգին էր ան, որուն յիշատակը պիտի մնայ ամենու սրտին մէջ:

Ձկայ վայրկեան մը որ առիքը չներկայանայ խօսելու իր մասին. բոլոր ուխտաւորներս կը յիշենք իր անոյշ ու մարդկային ժպիտը, որով կը դիմաւորէր ան մեզ: Բոլորիս հանդէպ հայրական էր իր վերաբերումը: Հայր Սահակը սիրելի դէմք մը մնաց բոլոր զինքը քանչոյդներուն համար:

ԲԺ. ԱՐԱՄ ՃԻՆՃԵԱՆ

Փարիզ

Հանգուցեալ Հայրը, հակառակ իր առաջացած տարիքին եւ առողջութեան սպառնացող տկարութիւններուն, աշխոյժ էր հոգիով ու մտքով. որոնց ենթարկած էր իր մարմինը, երիտասարդութեան պատրանքով տարուած: Մեզի կը մնայ խոնարհիլ աստուածային կամքին առջեւ եւ գուրգուրալ հանգուցեալէն մեզի մնացած մասին վերայ, որ իր յիշատակը կը կազմէ:

Հաւատարմի համոզումով կը խոնարհիմ իր յիշատակին առջեւ:

Փրոֆ. ՀՐ. ՏԵՐ ԱՆԴՐԵԱՍԵԱՆ

Իսթանպուլ

Հ. Սահակ վրդ. Տէր Մովսէսեանի կատարած գործը եւ յիշատակը կը մնայ անմոռանալի ամէն հայու սրտին մէջ, մանաւանդ այն սերունդին զորս Հ. Սահակ հասցուց: Յարգանք իր յիշատակին եւ հանգիստ իր վաստակաւոր ոսկորներուն:

ԵՐՈՒԱՆԴ. ՀԻԻՍԻՍԵԱՆ

Միլան

Հայ սերունդին տոհմային դաստիարակութեանը նուիրուած արժանաւոր մշակն էր ան. յարգանք իր անմահ յիշատակին:

ՅԱՐ. ՏԻԼՍԻՋԵԱՆ ԵՒ ԸՆՏԱՆԻՔ

Միլան

Տակաւին երկու օր առաջ, Ծնունդի առթիւ, այցելուներու հետ կը խօսէինք Միտքարկաններուն տուած կրթութեան մասին, եւ կը յիշէինք գաւազան դէպքեր ու դէմքեր, որոնք անմոռանալի են. ի մէջ այլոց յիշեցի Հ. Սահակը, որ Գատը գիւղի մէջ իմ ուսուցիչս եղած է, եւ կրնամ ըսել թէ ինքն է եղած իմ մէջ առաջին անգամ ազգային սէրը արթնցնողը: Հ. Սահակի համար, աշխարհի ամենամեծ մարդիկ՝ եթէ Հայ չէին, ան-

պայման իրենց արիւնին մէջ Հայու արիւն խառնուած էր, այս կամ այն ձեւով:

Անկասկած մեծ կորուստ է Հ. Սահակի մահը թէ՛ Միտքարկաններուն վանքին եւ թէ՛ հայ մատենագրութեան համար:

ՃՐՈՒ. ԱՐՏԱՇԵՍ ՕՐԱՔԵԱՆ

Գահիրէ

Հ. Սահակ վրդ.ի մահը մեծ ցաւ պատճառեց ինձ: Անցեալ աշնանը, երբ ես մի քանի օրով Արդոյ էի, առիք ունեցայ մօտից քանչնալու այդ հիանալի Միտքարկան Հայրը եւ գնահատել իր բարի սիրտը, հետադարձաբար յատկութիւնը եւ գիտութիւնը՝ որպէս պատմագէտ:

Հ. Սահակի մահը զգալի կորուստ է Միտքարկան Ուխտին, բայց իր բողոքը բարի յիշատակը զինքը միշտ կենդանի պիտի պահէ մեր բոլորի սրտերում:

ԲԺ. ՇԱՊՈՒՀ ՓԻԼՈՍԵԱՆ

ժընև

Աւելի քան մէկ քառորդ դար, Փարիզի մէջ, մշտական սերտ յարաբերութեամբ եւ փոխադարձ անկեղծ համակրանքով այնքան մտերմացած էինք անոր հետ, որպէս թէ ըլլայինք հարազատ ազգականներ:

ՕԹՈՆ ՀԵՔԻՄԵԱՆ

Փարիզ

Հ. Սահակ վրդ.ի մահը մեծ կսկիծ պատճառեց մեզի. որովհետեւ նախ վանքի վաստակաւորներէն էր, երկրորդ՝ մեր սիրելի Հայրենակիցն էր: Հայր եւ որդի կը խոնարհինք անոր դամբանին առջեւ:

ՄԿՐՏԻՉ ԵՒ ՏԻԳՐԱՆ ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆ

ԼՆԻԿԿՈՅ (ՎԻՇԵՆԳ)

Գառն յուսալսարութիւն պատճառեց մեզի յեղափարած հրաժեշտը աշխարհէս Հ. Սահակ վրդ. Տէր Մովսէսեանի, մինչ ունէր հրատարակելի երկեր. եւ ծրագիր մըն ալ ուղեւորելու դէպի մեր կողմերը, իր խանդավառ հոգիէն արձակուած կայծերով բոցավառելու համար ունկնդիր ազգակիցներու հոգիները: Ամէնէն աւելի անոր կորուստը զգալի պիտի ըլլայ Մուրատ-Ռաֆայէլեանի յարկէն ներս, ուրկէ անցնող սերունդներուն նա քամի հայրենասիրական ոգին՝ Հայոց Պատմութեան իւրաքանչեւ պերճալիս դասաւանդութեամբ:

ԲԺ. ԱՀԱՐՈՆ ԽԱԶԱՏՈՐԵԱՆ

Հալէպ

Ձեք կրնար երեւակայել զգացած ցաւս եւ յուզումս երբ Յառաջի վրայ կարդացի Հ. Սահակ վրդ. Տէր Մովսէսեանի յանկարծական մահուան գոյժը:

ԲԺ. ԱՐԱՄԱՒԻՍ ՍՐԱՊԵԱՆ

Միլան

Հայր Սահակի մահուան լուրը առնելիս՝ դառն կսկիծով լցուեց իմ սիրտը, եւ երեւակայում եմ ո՛րքան դառնացած պիտի լինի մեր Ս. Ղազարի Միաբանութիւնը... Մեծ է այս կորուստը ոչ միայն ինձ եւ Ձեզ համար, այլ նաեւ ամբողջ Հայ ազգի համար: Հայր Սահակներ շատ չունենէք, եւ նա մի փայլուն աստղ էր Ս. Ղազարի մէջ:

Ծնկաչոք Հ. Սահակի քարձ գերեզմանի առաջ, յայտնում եմ Միաբանութեանը իմ կսկիծը եւ անկեղծ ցաւակցութիւնը:

ՀԱՅԿ ԵԱՂՃԵԱՆ

ՊԵՐԷՆ

Ձեմ կրնար երեւակայել հոգեւորական մը (բացի երիւնքան Հայրիկէն) որ վայելէ այնքան սէր եւ ժողովրդականութիւն. որքան Հ. Սահակ Տէր Մովսէսեանը: Բազմավաստակ եւ տաղանդաւոր Հ. Սահակ Տէր Մովսէսեան, իբրեւ դաստիարակ, բանաւոր, հմուտ պատմագէտ, գրագէտ եւ բանախօս, արեւու նման փայլեցաւ մեր մօտային հորիզոնին վրայ, տարածելով իր շուրջ լո՛յս, սէ՛ր եւ սրբութիւն:

Անթիւ են իր ձիրքերն ու բարեմասնութիւնները, որով ան կրցաւ բեղմնաւորել իր կեանքը ու բարոյապէս պարտադրել ինքզինքը ամէն տարիքի եւ ամէն արժէքի առջեւ, որովհետեւ ամէնքին ալ իր պատշաճ եւ մտերմիկ ժպիտն ու խօսքն ունէր:

Բացառիկ են այսպիսի բազմակողմանի ձիրքերով օժտուած դէմքեր, իսկ Հ. Սահակ Տէր Մովսէսեան՝ բացառիկներու մէջ բացառիկն էր:

Ահա թէ ինչո՞ւ այսօր ամբողջ ազգ մը կը խոնարհի գլխահակ իր ս. դամբանին առջեւ, ձօնելու համար իր յարգանքի վերջին տուրքը անոր յուսաւոր հոգիին:

Յ. ՏԱՊԱՂԵԱՆ

Փարիզ

Հասաւ գոյժն անհաւատալի՝ Հ. Սահակ վարդապետին ոչ եւս է: Եթէ կարելի ըլլար սիրտը գրչէն հոսեցնել, միայն այդ միջոցաւ գուցէ կարենայի մասամբ արտայայտել անչափ յուզումս ու տխրութիւնս:

Մեծ է կորուստը Ուխտիդ համար. մեծագոյն է հայ ժողովուրդին համար, որուն հին ու նոր սերունդներուն փրկարար դաստիարակն էր հանդի-

սացած, արեւելէն արեւմուտք, աւելի քան կէս դարու նուիրեալ գործունէութեամբ՝ վասն Ազգի ու Կրօնի: Միտքարկան մեծ Ընտանիքին պատկանող թէ ոչ, պիտի չըլլայ հայ՝ որ չսգայ զինքը:

Սրտի, մտքի ու հոգիի կատարելութեան լոյս սփռող Մեծն Միտքարի վառած կանթեղներէն մէկը եւս կը մարի:

ԿԱՐՊԻՍ Մ. ԱԼԷՄՇԱՀ

Փարիզ

Յաւն ու սուրբ կ'անցնի Միաբանութեանը, Մը-խիթարեան եւ Մուրատ-Ռաֆայէլեան աշակերտներու, բարեկամներու եւ ծանօթներու սահմաններէն, եւ ցաւ ու սուգ կը դառնայ բոլոր Հայութեան համար: Հ. Սահակ վրդ.ի հետ բոլորս ալ կորսնցուցինք մասնիկ մը ազգային հարստութենէ՝ որ կազմուած էր եւ հաստատուած Սիրելի Հանգուցեալին աւելի քան յիսնամեայ բազմակողմանի եւ բազմավաստակ, գերազանցօրէն ազգային գործունէութեամբ:

ԽԱԶԻԿ Մ. ԱԼԷՄՇԱՀ

Միլան

Քանի մը օր առաջ իմացայ լուրը թէ մեր ամենուն սիրելի Հայր Սահակը ոչ եւս է:

Դժուար է հաշտուիլ այս հարուածին. կարծես մեր անցեալէն կարելորդ եւ անփոխարինելի մաս մը պակսեցաւ: Մեծ է ցաւս:

ԵՆՈՎՔ ԼԱԶՆԵԱՆ

ՊԵՐՈՒՐ

Մահը անգուր եւ անխուսափելի օրէնքն է մեր կեանքին. բայց կան այնպիսի անձնաւորութիւններ՝ որոնք բոլորովին չեն մեռնիր: Դոյնապէս եւ մեր սեանքի Հ. Սահակ վարդապետը, Մեծն Միտքարի ոգւոյն յիշատի մարմնացումը: Ան միշտ իր լուսաւոր ներկայութիւնը մեզի զգալի պիտի ընէ յանձին իր աշակերտներուն, որոնց սրտին մէջ ինքը նոյն ոգին անցնելի կերպով դրոշմած է:

Օրհնութիւն, փառք եւ յարգանք իր սրբազան յիշատակին:

ՏԻՐԱՆ ԼՈՒՍԱՐԱՐ

Փարիզ

Միտքարկան Միաբանութիւնը կը կորսնցնէ յանձին մեր սիրելի Հ. Սահակին՝ իր ամէնէն կարեւոր ոյժերէն մէկը. իսկ ես՝ սիրելի եւ անմոռանալի բարեկամ մը, որ հայրս եւ բոլոր ընտանիքս քանչցած էր Պոլիս:

ԼԵՒՈՆ ԵՐԱԶԵԱՆ

Փարիզ

2էֆ կրնար երեւակայել այն շանքահարիչ խոր տալանութիւնը որ զգացիմք ընտանեօք մեր շատ սիրելի Հայր Սահակին յանկարծական մահուան լուրը առնելուն:

Այս եղբրական կորուստը ոչ թէ միայն մեզի, այլ հայ ազգին համար կորուստ մ'է անփոխարինելի: Բայց վստահ ըլլանք եւ եմք ապագային համար, որ Ազգը իր ծոցէն դարձեալ պիտի ծնի Հայր Սահակներ, երբ Մխիթարեան մտքի եւ համեմարի օնախը կանգուն է. անկէ դուրս պիտի ելլեն մտքի, սրտի եւ հոգիի ազնուութիւնը ցոլացնող նոր մշակներ:

Չենք կրնար մոռնալ հանգուցեալին այն բարի, հեզ ու համբերատար ընկերակցութիւնը՝ բոլոր ազգայիններուն հանդէպ, դպրոց եւ վանք այցելութեան միջոցին. մասնաւորաբար իր անկեղծ, անաչառ եւ անշահախնդիր վարմունքը զաւակներու եւ մեզի հանդէպ:

ԿԻՐԱԿՈՍ ՍԱԳԱՅԵԱՆ եւ ԸՆՏԱՆԻՔ ԽԹԱՆԱԿՈՒԼ

Հ. Սահակի մահով՝ Մխիթարեան Ուխտը եւ հայ ժողովուրդը կը կորսնցնեն իրենց ամէնէն արժանաւոր զաւակներէն մէկը, որու կեանքն ու գործը, ինչպէս անցեալի, նոյնպէս եւ ապագայի սերունդներուն համար պիտի հանդիսանան խանդավառութեան եւ ներշնչման աղբիւր, եւ կեանքի առաջնորդ:

Լուսին

ԵՐՈՒԱՆԻ ՓԱՄՊՈՒՔԵԱՆ

Սրտի անհուն կսկիծով լսեցի մեր սիրելի Հայր Սահակին մահուան լուրը: Իր մահը մեր ամէնուս կորուստն է:

Մարտիրոս

Ա. ՏԵՐ ԶԱՔԱՐԵԱՆ

Հ. Սահակ Տէր Մովսէսեանի մահը շատ ազդեց իմ վրայ. նա մահաւանդ որ վերջերս դպրոցը մօտէն հանչնալու առիթը ունեցած էի: Հայր Սահակի շունչը տարիներ զգացուցաւ Սերի վարժարանէն ներս, եւ իր մահէն յետոյ իր բողոքած աշխատանքին շնորհիւ միշտ պիտի սաւառնի:

Մարտիրոս

ՍԱՐԳԻՍ ՊՕՂՈՍԵԱՆ

Յառով իմացայ մահուան գոյժը այնքան սիրուն է եւ յարգաւոր Հ. Սահակ վրդ. Տէր Մովսէսեանի, որուն քանի մը տարի առաջ Յառաջի մէջ հրատարակած շարք մը ազգասիրական եւ շի-

նիչ յօդուածները ա'յնքան հետաքրքրութեամբ կարդացուցան:

Անցեալ ամառ ամբողջ Ուխտաւորներս ծանօթացանք իրեն հետ: Հաշարահը դողդոջուն քայլերով եւ խանդաղատամբով սեղանէ սեղան կ'երթար ամէնուն հետ քանի մը բառ փոխանակելու:

Օրհնեալ ըլլայ իր յիշատակը:
ՀԵՐՄԻՆԷ ՄԻՍԳՃԵԱՆ

Նիս

Խոր ցաւակցութիւններս մեր շատ սիրելի Հայր Սահակին մահուան առթիւ: Լոյսերու մէջ ննջէ ու աստուածային տեսութեան արժանանայ գերազանցօրէն ազգանուէր այս մշակը:

Յ. ԳՈՒՄՐՈՒՆԵԱՆ

Գահիրէ

Պատկառելի Միաբանութեանդ լուսաւոր ջանքերէն մէկն էր հանգուցեալը. մաղքեմք որ Ամենակալը լուսաւորէ իր հոգին, Ազգին եւ Միաբանութեան տալով արժանաւոր յաջորդ մը:

ՀՐԱՆԳԻ ԵՒ ԱՆԱՀԻՏ ԲԱՄՊԱԿԵԱՆ
Ճենովա

Առանձին տոմսերով խորին ցաւակցութիւններ կը յայտնեն.

ՏԵՐ ԵՒ ՏԻԿ. ՄԻՆԱՆԵԱՆ (Էփէնէ)
ՏԵՐ ԵՒ ՏԻԿ. ԷԼՄԱՅԵԱՆ (Պուլսէր)
ՏԵՐ ԵՒ ՏԻԿ. ՍՈՂՈՅԵԱՆ (Փատուա)
ՃԻՐ. ԱՐՄԱՆՏ ՍԱՐԵԱՆ (Միւսն)
ԲԺ. ՏՕՆԱՊԵՏ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ (Միւսն)
ՊՐ. ՎԱՀԷ ԶԻՆՃԻՐԵԱՆ (Թրեմթ)

ՅԱԻԱԿՑԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

Con profondo dolore apprendiamo subitanea ed inestimabile morte perdita Reverendo e Amatissimo Padre Sahag, nostro grande educatore. La fiamma inestinguibile d'alta stima ed affetto imperituro immortalato nei nostri cuori rende il cordoglio ancor più grande. Tutti membri Associazione Allievi Marsiglia inchinansi unanimi e rispettosamente memoria incancellabile dell'uomo geniale che piange oggi nazione armena. Rispettosamente preghiamo accettare sentite condoglianze per lutto vostra Congregazione.

Presidente Associazione Ex Allievi
Sourig Exergian

Marsiglia

Apprenons décès Père Sahag ; sincères condoléances.

Association
anciens élèves de Marseille

Marseille

Au nom des pèlerins Marseillais et en mon nom personnel condoléances émues. Sit tibi terra levis in eternum.

Ferdy Abadjian

Marseille

Comité des parents des élèves envoie sincères condoléances perte cruelle regretté Père Sahag.

Presidente Hermine Feydit

Paris

Սրտի խորունկ ցաւով իմացայ Միաբանութեանդ բազմաթիւ եւ ազգասիր բոլորիս սիրելի Հայր Սահակ վարդապետ Տէր Մովսէսեանի տըխուր վախճանը մեզմէ յաւիտեական բաժանումով. ընդունեցէ՛ք ցաւակցութիւններս. Աստուած ձեր կեանքները երկարէ:

ԱԼԵԿՍԱՆԵԱՆ

Հոռմ

Cruellement touchés décès Père Sahak, adressons sincères condoléances.

Feydit

Paris

Très touchés perte Père Sahag cordiales condoléances.

Zodian — Der Nersessian

Nice

Sincères condoléances décès Père Isaac.

Ohanian

Giroflay (S. O.)

Costernati morte improvvisa Padre Isacco, piangiamo il valente Maestro.

Dott. Mardighian

Brescia

Accomunati dolore Famiglia piangiamo perdita Maestro e grande amico.

Sergio e Bagrad Eliazarian

Bergamo

Costernati piangiamo con voi immensa perdita.

Fam. Eliazarian

Bergamo

Condoglianze tragica morte del Padre Isacco.

Fam. Gianighian

Cortina d'Ampezzo

Ի ՊԱՏԻՒՆ Զ. ՍԱՀԱԿ ՎՐԴ. ՏԵՐ ՄՈՎՍԵՍԵԱՆԻ

«ՀԱՅՐ ՍԱՀԱԿ»ԵԱՆ ՄՐՅԱՆԱԿ

Ողբացեալ Հ. Սահակ վրդ. Տէր Մովսէսեանի յիշատակն յաւերժացնելու համար՝ իր ձեռասուն սաներէն Բժ. Արտաշէս Միլտոնեան, Բժ. Վահրամ Մովսէսեան եւ Պր. Ղազարոս Աճէմեան (Պուլսէն) դեղեցիկ զաղափարն յղացան հաստատելու անձեռնմխելի հիմնադրամ մը, որուն տոկոսով՝ տարուէ տարի մրցանակ տրուի Մուրատ-Ռափաէլեան վարժարանի բարձրագոյն դասարանի աւագնէն բաժն աշակերտին, Հայոց Պատմութեան մէջ, Հ. ՍԱՀԱԿԵԱՆ ՄՐՅԱՆԱԿ անունին տակ:

Վարժարանին Տեսչութիւնը հաճոյքով ընդառաջեց այդ ազնիւ զաղափարին, ստանձնելով հիմնադրամին պահպանումը եւ մրցանակի բաշխումը, որ արժէքաւոր առարկայ մը պիտի ըլլայ, եւ ոչ թէ դրամ:

Վերոյիշեալ նախկին Սաները մեր թերթին էջերով կոչ կ'ուղղեն Հ. Սահակ վրդ. ի ձեռասուն բոլոր նախկին սաներուն, սիրով մասնակցել մրցանակի հիմնադրամին:

Վեցեակի, 2 Յունուար 1957

«ՅԱՌԱՋ»Ի ՄԵԾԱՐԱՆՔԸ

Յառաջ Օրաթերթի Յունուար 26ի թիւը ամբողջութեամբ նուիրուած էր լուսահոգի Հ. Սահակ վրդ. Տէր Մովսէսեանի յիշատակին, իբրեւ հրահրման յաջորդ օրը կատարուելիք հոգեհանգստեան պատարագին եւ ժողովրդական յարգանքին:

Յօդուածներ ստորագրած են Բարդէն Գավէդ, որ ՎԱՍՏԱԿԵՑԱԻ ԵՒ ԱՐԳ. ՀԱՆԳՅԻ խորագրին: